



Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՄԻ „ՊԱՐՏՔ“-Ի ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Հ. Թումանյանի մահվան 25-ամյակի առթիվ)



այտնի է, որ մոտիկ անցյալում հայ գրական անդաստանի անխոնջ մշակները նյութական ծանր պայմաններում են գտնվել և նրանց կյանքը լի է եղել զբոսանքների, Հայ գրողի նյութական այդ դժնդակ վիճակը դրդել է տաղանդավոր բանաստեղծ Ա. Մատուռյանին հետևյալ աղոթքը մրմնջալու։—

Տո՛ւր ինձ կտոր հաց. կամ այնպես շնորհ, որ կարողանամ օգուտ ապրելու։  
Նյութական կարիքը հայ գրողներից շատերին ստիպել է պարտքերի մեջ թաղվելու Պարտատերերի ուրվականը շարունակ հետևել է հայ գրողին։ Պակասը լրացրել են հայ հրատարակչական կազմակերպությունները, որոնք իրենց հերթին աշխատել են օգտագործել հայ գրողի անօգ վիճակը։

Տարիներ շարունակ նյութական սուղ պայմաններում են ապրել հայ անվանի գրողներ Պ. Պոռյանը, Վ. Փափազյանը, Ա. Շիրվանզադեն, Ա. Մատուռյանը, Դ. Աղայանը, Հ. Թումանյանը և շատ ուրիշները։ Հայ հրատարակչական կազմակերպությունները փոխանակ օգնելու, օժանդակելու կարիքի մեջ խեղդված հայ գրողներին, ընդհակառակը, զբաղվել են հայ գրողին վարկաբեկող, անհիմն ու մտացածին պատրվակներ փնտռելով, որպեսզի այդ պատրվակների տակ հնարավորություն ունենան հրաժարվելու իրենց համակրանքը չվայելող այս կամ այն գրողին նյութական օժանդակություն ցույց տալուց։

Ստորև բերում ենք մի քանի փաստաթղթեր, որոնք, մեծ մասամբ հայ խոշորագույն բանաստեղծ Հովհաննես Թումանյանին վերաբերվելով հանդերձ, դրսևորում են ոչ միայն հայ գրողի անապահով վիճակը մեր մոտիկ անցյալում, այլև առավելապես բնորոշիչ են հանդիսանում անցյալի բուրժուական հայ իրականության նեխված մթնոլորտի ու խայտառակ բարքերի պատկերման տեսակետից։

Մեծ բանաստեղծ Հ. Թումանյանի կենսագիր և դուստր Ն. Թումանյանը գրում է, որ 1892 թվի մարտ ամսին Հայոց Հրատարակչական Ընկերության գրասենյակում բանաստեղծը ստանձնում է գրասենյակապետի պաշտոնը՝ ամսական 20 ռուբլի ուճկով։ Կարճ ժամանակ պաշտոնավարելուց հետո Հ. Թումանյանը հրաժարվում է այդ աշխատանքից։ Սակայն կենսագիրը այստեղ չի հիշատակում բանաստեղծի այն «պարտք»-ի և դրա հետևանքով եղած զրուպարտությունների մասին, որոնք պատճառ եղան, որպեսզի բանաստեղծը իր կապերը խզի Հայոց Հրատարակչական Ընկերության հետ։ Հավանորեն կենսագիրը ձեռքի տակ չի ունեցել մեր կողմից ստորև բերվող փաստաթղթերը։

Փաստաթղթերից մեկը գրված է 1893 թվի դեկտեմբերի 28-ին և կրում է «Պարտաթուղթ 73 ռ. 52 կ.» վերաբերված։ Փաստաթուղթը գրված է այլ անձնավորության ձեռքով և ստորագրված Հ. Թումանյանի կողմից։ Ահա այդ փաստաթուղթը։—

Պարտաթուղթ 73 ռ. 52 կ.

Ներկա հաջար ուժ հարյուր իննսուներեք թվի դեկտեմբեր ամսի քսան և ութին ըստ

պահանջման ներկա պարտաթղթովս պարտավոր եմ հատուցանել Թիֆլիսի Հայոց

Հրատարակչական Ընկերության վարչությանը յոթանասուն երեք ռուբլի և հիսուն և երկու կոպ., որը Ընկերության գրասեն-

յակագետի պաշտոնականությունն ժամանակ ծախքերի համար ինձ տրված գումարներից ավելորդ մնացած է ինձ մոտ:\*)

Հ. Թումանյան

Սույն պարտաթուղթը հինգ տարուց հետո, 1897 թվի ապրիլի 10-ին, հրապարակվում է «Մշակ» լրագրի էջերում:

Պարտաթղթի մամուլում հրապարակվելու շարժառիթը հետևյալն էր.—

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերության վարչության նախագահ և «Մշակ» լրագրի խմբագիր Ալեքսանդր Քալանթարը մի օր Ղազարոս Աղայանին և Հովհաննես Թումանյանին հայտնում է, որ Շիրվանզադեն Ընկերությանը գրամ է պարտք ու չի տալիս իր պարտքը: 1896 թվի նոյեմբերի 15-ին Ղ. Աղայանը և Հ. Թումանյանը Քալանթարի ասածները հաղորդում են Շիրվանզադեին, միաժամանակ կշտամբելով վերջինիս, թե ինչու իր պարտքը չի վճարում: Ա. Շիրվանզադեն, հիշյալ ղրպարտությունից վիրավորված, հաջորդ օրն իսկ մի նամակ է գրում Ընկերության վարչությանը, հայտնելով, որ ինքը պարտ չէ Ընկերությանը և ապօրինի է չտպագրված գրքույկի թարգմանության համար տրված վարձատրությունը պարտք հաշվելը միայն



Հովհաննես Թումանյան

վել: Սաորև բերում ենք Շիրվանզադեի տակավին անտիպ այդ նամակը.—

16 նոյեմբերի 1896 թ. Թիֆլիզ

Թիֆլիզի Հայոց Հրատարակչական Ընկերությանը վաշտոյանը

Երեկ իմ հարգելի բարեկամ Ղազարոս Աղայանցը և Հովհաննես Թումանյանը ինձ հաղորդեցին, որ վարչությանը գրասենյակում խոսվել է, թե իբրեւ Ընկերությանը փող եմ պարտ: Խոսողն է եղել վարչությանը նախագահ պ. Քալանթարը: Ես որոնեցի իմ բաղմաթիվ պարտատերերի ցուցակում Ընկերությանը անունը և չգտա: Չեմ հիշում, որ երբեք ես պարտ եղած լինեմ նրան: Գիտեմ միայն, որ անցյալ տարի Ընկերությանը խմբագրական մասնաժողովը ինձ առաջարկել էր թարգմանել երկու գրքույկ—մեկը «Գեոտնափորի երեխաները», մյուսը, եթե չեմ սխալվում, «Նամակից ընկա-

ծր»: Ավարտելով գրքույկների թարգմանությունը և հանձնելով Ընկերությանը, ես գրասենյակից ստացա 50 ռուբլի վարձ: «Գեոտնափորի երեխաները» տպվեց, իսկ մյուս գրքույկը, չգիտեմ ինչու, չտպվեց: Հիսուն ռուբլին իմ աշխատանքի վարձն էր, որ Ընկերությունը պարտավոր էր ինձ տալ, և տվեց: Եթե չտպված գրքույկի համար տված փողը համարվում է պարտ—դա իհարկե ապօրինի է: Ես թարգմանել եմ այն,

\*) ՀՍՍՌ պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 30, Թիֆլիսի (հետագայում Կովկասի) Հայոց Հրատարակչական Ընկերություն, գործ № 12, էջ 216:

ինչ որ ինձ տվել է Ընկերությունդ: Իսկ տպել—չտպելը նրա գործն է: Հայտնեցով վարչությանդ այս հանգամանքը, պահանջում եմ անհապաղ տալ ինձ դրական լուրեր և ցատրություն այն վատ լուրի մասին, որ տարածել է իմ մասին վարչությանդ նախագահը և գուցե ուրիշները:

Պահանջում եմ, որ վարչությունդ ինձ հայտնե, արդյո՞ք նա ևս նույն կարծիքի է, թե ես պարտ եմ Ընկերությանդ: Եթե

Մեծանուն վիպասանի այս նամակին վարչությունը վարկաբեկիչ պատասխան է տալիս:

Նույն թվի ղեկսեմբերի մեկին Շիրվանզադեն երկրորդ նամակն է գրում Ընկերության վարչության, պաշտպանելով իր՝ հայ գրական գործչի ոտնահարվող իրավունքները: Այդ նամակից բերում ենք մի հատված.—

«...Ես կրկին անգամ պահանջում եմ վարչությունիցդ փաստերով և միջնորդ դատաւանով ապացուցանել իմ պարտքը, որպեսզի ես հատուցանեմ: Պահանջում եմ և ոչ խնդրում, որովհետեւ այնտեղ, ուր կա անիրավ կերպով շոշափված պատիվ, վիրավորվածը միայն պահանջել կարող է և ոչ խնդրել:

Եթե վարչությունդ կլռե կամ դարձյալ առանց փաստի կպատասխանե, այն ժամանակ ես իմ բարոյական պարտքը կհամարեմ նրա ճակատին դրոշմել զրպարտիչ և անվաճարկող հիմնարկության անունը, քանի որ ուրիշ անուն չի կարելի տալ մի պաշտոնական մարմնի, որ անհիմն, անփաստ աջ ու ձախ զրպարտում է մի համեստ գրականական գործչի: Վարչությունդ սխալվում է, ես նրանից ավանս չեմ վերցրել, այլ իմ աշխատանքի ամենափոքր վարձը \*»:

Շիրվանզադեի սույն նամակի վրա կա Ա. Քալանթարի ստորագրությամբ հետևյալ

ալո, թող նա միջնորդ դատավորների միջոցով ապացուցանե իմ պարտքը: Իսկ եթե ոչ, թող ինձ հաղորդե այդ մասին պաշտոնապես: Այն ժամանակ ես Պ. Քալանթարի տարածած լուրը կհամարեմ զրպարտություն և իբրեւ զրպարտված մարդ, անհատական պարտականություն կհամարեմ պարտնից պահանջել իմ ցանկացած բացատրությունը:»

### Շիրվանզադե

մականգրությունը. «վարչությունը որոշեց թողնել այս գրությունը առանց հետևանքի»:

Վարչության լուրջամբ խնդիրը չի ըսպառվում. 1896 թ «Տարազ»-ի № 49-ում Շիրվանզադեն հանդես գալով խնդրում է «Աղբիւր»-ի ու «Տարազ»-ի խմբագիր Տիգրան Նազարյանին և «Մուրճ»-ի խմբագիր Ավետիք Արասխանյանին միջնորդ դատավորների դեր խաղալ. վերջիններս ծանոթանալով գործին արդարացնում են Շիրվանզադեին: 1897 թ. ինտրվարի 15-ին «Տարազ»-ի № 7-ում Շիրվանզադեն անարգանքի սլոնին է գամում Հրատարակչական Ընկերության վարչության և հատկապես վարչության նախագահ Ա. Քալանթարին ու այսպիսով խնդիրը սպառված համարում:

Շիրվանզադեի հետ տեղի ունեցած միջադեպը առիթ է ծառայում փոքրոգի Ա. Քալանթարի համար, որպեսզի նա հալածանք սկսի նաև Հ. Թումանյանի նկատմամբ: Օգտագործելով Ընկերության վարչության նախագահի իր դիրքը, Շիրվանզադեի գործի առթիվ կայացած մի ժողովի արձանագրության մեջ կեղծել է տալիս Հ. Թումանյանի խոսքերը: Բանաստեղծը անկարող լինելով հանդուրժել նմանօրինակ այլանդակ երևույթը, 1897 թվի ապրիլի 7-ին գրած նամակով իր զայրույթն է արտահայտում այս առթիվ: Ահա Հ. Թումանյանի այդ նամակը.—

### Թիֆլիզի Հայոց Հրատարակչական

Հրատարակչական Ընկերության վերջին ընդհանուր ժողովում վարչությանդ պ. նախագահը արձանագրությունների մեջ ի միջի այլոց կարդաց և իմ խոսքերը, թե ես ասել եմ նրան «Մշակ»-ի խմբագրատանը և իրավունք եմ տվել արձանագրելու: Ընդհանուր ժողովին այնպես եղավ, որ ես այդ մասին

\*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 30, Թիֆլիսի (հետագայում Կովկասի) Հայոց Հրատարակչական Ընկերություն, գործ № 11, էջ 589:

### Ընկե Բուրյան հարգելի վարչությանը

խոսելու ձայն շատացա, բայց այժմ կաևոր եմ համարում հայտնել հետևյալը, որ ժողովի նախընթաց օրը, Ընկերության գրասենյակում հայտնեցի և պ. նախագահին, հրե նա ցույց տվեց ինձ այդ արձանագրությունը: Իմ խոսակցությունից արձանագրված է միայն մի նախադասություն և այն

\*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 30, Թիֆլիսի (հետագայում Կովկասի) Հայոց Հրատարակչական Ընկերություն, գործ № 11, էջ 477—589:

էլ այն ձևով, որ կարծել է տալիս, թե ես պ. Քալանթարի ասածները պ. Շիրվանզադեին հայտնելը մի հանցանք եմ համարում և ուղում եմ այդ հանցանքը հերքել ինձանից: Ես, ընդհակառակը, այն կարծիքն եմ հայտնել, և այժմ էլ նույն կարծիքին եմ, որ պ. Քալանթարի ասածները պետք էր հայտնել պ. Շիրվանզադեին, որովհետեւ դա շոշափում էր դրող կողմած մարդու վարկը և նույնիսկ այն րոպեին խոչընդոտ ու երեսնեմանք էր դուրս գալիս մի այլ գրողի— պ. Աղայանի համար, որի առջև յուր կարիքի ժամանակ դնում էին այդ օրինակն ու ասում. «Ձեզ կանխավճար չենք կարողանում տալ, որովհետեւ տալիս ենք, հետո անախորժ բաներ են դուրս գալիս. այ օրինակ, Շիրվանզադեին էլ տվինք, մնացել է պարտ, էլ չենք կարողանում ետ ստանալ, հիմա ի՞նչ անենք, գնանք տունը վեր գրե՞նք»: Պ. Աղայանն ու ես էլ, թեև պատահամար, այդ հայտնել ենք պ. Շիրվանզադեին և նրա հետ էլ մեր դժգոհությունը, որ թե պարտ է, ինչու չի վճարում: Իդուր էր պ. Քալանթարն այնքան նեղանում և մեր արածը համարում մի վատ բան: Եթե նա հշմարիտ էր ասել՝ մեղավորը կլինեք պ. Շիրվանզադեն, իսկ եթե այդ զրպարտություն էր, ինչու էր անում: Գործի վրա այս տեսակ նայելով ես շատ պարզ էլ հայտնել եմ եղբւրյունը և երբեք չեմ աշխատել ինձ արդարացնել այն ձևով, ինչպես արձանագրված է՝ թե ոչինչ չեմ ասել պ. Շիրվանզադեին, ևս միայն ասել եմ և այլն: Իսկ ինչ վերաբերում է նրան, թե ես պ. Քալանթարին իրավունք լինեմ տված իմ խոսքերն արձանագրելու, այդպիսի բան չի եղած, որովհետեւ խոսքերն անփոփոխելի իրեր չեն, որ ես հավատամ մեկին կամ մյուսին, ով կուզե լինի, մանավանդ երբ տեսնում էի, թե խոսքերի համար

ինչ վեճ էր բացվել: Պ. Քալանթարն այդ մասին ունեցած մեր երկրորդ խոսակցության ժամանակ երբ ինձ ասաց, թե «Ես կարծում էի Դուք անցյալ անգամ եկել էիք հայտնելու, որ Դուք ոչինչ չեք ասել Շիրվանզադեին», ես զարմացած հարցրի. — Դուք այդ ընչից եղբակացրիք. նրանի՞ց, որ ես ասացի ուղում եք թեկուզ Աղայանին էլ մեղադրեց հանցեք և ասելու բոլոր հանցանքն ինձ վրա դեք: Ես այդտեղ հանցանք չեմ տեսնում, այլ բոլոր հանցանքի դեմ, որ կողմը որ ուղում է այդ հայտնվի: Բայց որ ուրիշ անգամ էլ այդպիսի եղբակացություններ կանեք, երբ կամե՛նաք, երբ հարկավոր է, ես իմ խոսքեր գրեմ, տամ ձեզ: Նա այդ չկամեցավ և ինչպես ասաց, թե ինքը և թե վարչությունը իբրեւ թե վճռել էին չզբաղվի, այդ խնդրով: Այն ինչ վերջում բոլորովին ուրիշ բան դուրս եկավ և մեջն էլ արձանագրված, թե Հովհաննես Թումանյանը պ. Նախագահին այսպիսի բան է ասել:

Եթե այդ վկայությունը կարեւոր էր վարչության համար, ինչու նա չդիմեց ինձ և ինձանից չուզեց լսել իմ խոսքերը, այն խոսքերը, որ յուր պաշտոնական արձանագրությունների մեջ բերելու էր ընդհանուր ժողով: Ոչ ապաքեն վարչության հարգելի անդամները ճանաչում էին ինձ, մենք միշտ հանդիպում էինք և ես հաճախ լինում էի Ընկերության գրասենյակում:

Արդ՝ կրկնում եմ, որովհետեւ ընդհանուր ժողովում չկարողացա այդ մասին խոսել, այժմ հայտնելով իմ զարմանքը այդպիսի արձանագրության համար, խնդրում եմ հարգելի վարչությանը՝ ի նկատի առնել իմ ալս գրությունը, մի տնօրինություն անել հիշյալ արձանագրության վերաբերմամբ և հայտնել ինձ:

Հարգանքով Հովհաննես Թումանյան

1897 թ. Ապրիլ 7 Թիֆլիզ\*)

Հ. Թումանյանի սույն նամակը գրվելուց երեք օր հետո, 1897 թվի ապրիլի 10-ին, ինչպես տեսանք, փոքրդի Ա. Քալանթարը «Մշակ» լրագրում հրապարակում է 73 ո. 52 կ-ի պարտաթուղթը: Այս գումարի մի մասը Հ. Թումանյանը վճարել էր, իսկ մյուսն ապա մասի համար էլ վարչության № 900 գրությունը պատվեր էր ստացել թարգմանելու Վ. Բեկինսկու աշխատությունը Մ. Լեր-

մոնտովի մասին: Ա. Քալանթարը այս բոլորի մասին անպիտակ ձևանալով «Մշակ»-ում հայտարարում է, որ Հ. Թումանյանը Ընկերությանը մոտ 60 րուբլի է պարտ և չի վճարում: Այս աբսուրդորիշ հայտարարությունը կարդալուց հետո Հ. Թումանյանը հետեւյալ նամակն է հղում Ընկերության վարչությանը և բացատրություն պահանջում նրանից:

\*) ՀՍՍՐ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 30, Թիֆլիսի (հետագայում Կովկասի) Հայոց Հրա-

տարակական Ընկերություն, գործ № 12, էջ 175—176:

### Թիֆլիզի Հայոց Հրատարակչական Ընկերության հարգելի Վարչությանը

«Մշակ» լրագրի այսօրվա համարում տղաված է, թե Ընկերությանը մոտ 60 ր. եմ պարտ և չեմ տալիս: Որովհետև այս լուրը արատավորում է իմ պատիվը, ուստի խնդրում եմ հարգելի Վարչությանդ ինձ հայտնել, թե ինչու և ինչպես է եղել, որ այն պարտքը, որ ես պարտ եմ Ընկերությանդ, այսօր դուրս է եկել հրապարակ այն թերթում, որի խմբագիրը Վարչությանդ պ. նախագահն է, և այն էլ այնպիսի գրապարտության մեջ հանդերձ, թե ես չեմ տալիս:

Ես կարծում եմ Վարչությունդ այդ կար-

ծիքին չի կարող լինել, թե ես խույս եմ տալիս իմ պարտքից, քանի որ այդ պարտքի մի մասը վճարել եմ ես, մնացածի համար ստորագրություն եմ տվել, իսկ անցյալ տարվանից Վարչության թղթով պատվեր եմ ընդունել թարգմանելու Բելինսկու գրվածքը Լեոմոնտովի մասին, և այն ի հաշիվ հիշյալ պարտքի, ինչպես խոսեցել եմ հատկապես Վարչության պ. նախագահի հետ:

Այս մասին խնդրում եմ Վարչության կարծիքը:

Հարգանքով՝ Հովհ. Թումանյան

1897 թ. ապրիլ 10 Թիֆլիզ\*)

Հրատարակչական Ընկերության Վարչությունը բանաստեղծի նամակի առթիվ հետևյալ արձանագրություն է կազմում.—

«Թումանյանը գրության մեջ, ուղղված Վարչությանը, խնդրում է հայտնել իրան թե ինչպես է եղել, որ իր պարտքը Ընկերության հրապարակ է դուրս եկել «Մշակ» լրագրում և թե Վարչությունը նույն կարծիքի է արդյոք, որ Թումանյանը չէ տալիս իր պարտքը, ինչպես տպված է «Մշակ»-ում, թե ոչ:

Վարչությունը որոշեց հայտնել պ. Թումանյանին, որ այդ հարցը իրան չէ վե-

րաբերում, այլ «Մշակ» լրագրի խմբագրության, որին և կարող է դիմել»):

Վարչության այս խոստովողական պատասխանից վրդովված Հ. Թումանյանը երկրորդ նամակն է գրում: Միաժամանակ նա վերադարձնում է Վարչության N 200 գրությունը, որով պարտավորվել էր թարգմանելու Վ. Բելինսկու աշխատությունը Մ. Լեոմոնտովի մասին և 53 ր. 52 կ. գումարը ու իր կապերը խզում Հրատարակչական Ընկերության հետ: Ստորև բերում ենք Հ. Թումանյանի այդ նամակը.—

### Թիֆլիզի Հայոց Հրատարակչական Ընկերության Վարչությանը

Հովհաննես Թումանյանից

Վարչությունդ իր N 150 գրության մեջ ինձ տված պատասխանով ակնհայտի դաշնակից է հանդիսանում «Մշակ» լրագրին: Նա ոչ միայն իրան պատասխանատու չի համարում, երբ իմ մուրհակը յուր գանձարանից դուրս է եկել հրապարակ, այլև չի կամենում պատասխանել գոնե իմ այն հարցին, թե ես խույս եմ տվել իմ պարտքից, թե չէ:

Նա այսպիսով ինձ զրկում է յուր միջոցով ճշմարտությունից օգտվելու և զրպարտությունը հերքելու հնարավորությունից, համաձայնում է կատարված իրողության հետ և բացարձակ խրախուսում է մի տմարդի վարմունք, որ բոլորովին ուրիշ առարկայի և վեճի ժամանակ անտեղի և ապօրինի կերպով լրագրում իմ երեսօմն են տալիս

այն պարտքը, որ ես պարտք եմ Ընկերությանը, և որը մինչև անգամ նրա տեղեկագիրներում էլ չի դուրս եկել:

Այդ բավական չի, դրա վրա ավելանում է զրպարտությունը, թե ես չեմ տալիս իմ պարտքը: Ես դիմում եմ Վարչությանը, խնդրում եմ նրա խոսքը այս մասին, իսկ նա ինձ ուղարկում է... «Մշակ»-ի խմբագրատունը: Այնուհետև ինձ համար մնում էր ցավով որոշել և կտրել իմ հարաբերությունը Հայոց Հրատարակչական Ընկերության հետ, որ այդպես է ճանաչում յուր հետ գործ ունեցողի իրավունքը և այդքան անփութ է դառնում դեպի գրողի դասն ու պատիվը, որ հայտնի կոխկրտում են նույնիսկ Ընկերության անդամները, Ընկերության դատի անունով Ընկերության դանձարանի

\*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ N 30, Թիֆլիսի (հետագայում Կովկասի) Հայոց Հրատարակչական Ընկերություն, գործ N 12, էջ 179:

\*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ N 30, Թիֆլիսի (հետագայում Կովկասի) Հայոց Հրատարակչական Ընկերություն, գործ N 13, էջ 16:

թղթերը հրապարակ հանելով, խեղաթյուրելով և զրպարտելով:

Ահա նամակիս հետ ներկայացնում եմ իմ պարտքի մնացածը՝ հիստոներեք ռուբլի (53) 52 կոպեկ և սրանով վերջանում են իմ հաշիվները Հրատ. Ընկերության հետ: Վերադարձնում եմ նույնպես Վարչությանը № 900 թուղթը, որ գրել է անցյալ տարի և

որով ինձ առաջարկել է թարգմանել Բելինսկու գրվածքը Լեոմոնտովի մասին:

Ես միայն զգացմունքներով կարող եմ կապված լինել Ընկերության հետ և ոչ թե թարգմանության պատվերներով, իսկ երբ զգացմունքները վերացած են մեջտեղից, մեր մեջ չի կարող լինել որևէ հարաբերություն:

## 2. Թումանյան

1897 թ. ապրիլ 24

(Թիֆլիս\*)

Մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը տեսնում էր, որ ոտնահարվում էին բիրտ կերպով ոչ միայն իր ու իր գրչակից եղբայրների իրավունքները, այլ ամենուրեք իշխույթը իշխում է մարդկային իրավունքների

անտեսում, հալածանք, բռնություն ու ստորաքարշություն. դրա համար էլ ևս հանգում է հետևյալ խորհմաստ եզրակացության.

...ու միշտ քանի որ կա  
Շահ ու գերի, ստույլ ու տեր,  
Ձի լինելու երկրի վրա  
Ոչ շիտակ խոսք, ոչ կյանք, ոչ սեր...

Սակայն բանաստեղծը վհատել չգիտեր, նա խոր հավատ ուներ հայ ժողովրդի պայ-

ծառ ապագայի նկատմամբ ու ոգեշնչված պայծառ գալիքով գրել է.—

Բայց չեմ վնասել. անսպառ մեկ իդ  
Դեռ ինձ մղում է դեպի հառաջ անվերջ:

Հառաջ կովելով, և կգա մի օր,  
Որ կնկնի ներկան վատշվեք, դաժան,  
Նրա ավերի վերա՝ փառավոր  
Ապագան լուսո կը կանգնի նշան:

\* ) ՀՄՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 30, Թիֆլիսի (հետագայում Կովկասի) Հայոց Հրատարակչական Ընկերություն, գործ № 12, էջ 198—200:

